«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
23 դեկտեմբերի 2008 թ.
Պետական գրանցման թիվ 32908389

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

12 դեկտեմբերի 2008 թ. N 15-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «թ» կետին համապատասխան՝

Հրամայում եմ՝

Հաստատել հարկ վճարողի կողմից տեղեկություններ փակցնելու հայտարարության օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

**ՀՀ կառավարության առընթեր
պետական եկամուտների
կոմիտեի նախագահ՝** **Գ. Խաչատրյան**

**Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների
կոմիտեի նախագահի
2008 թվականի դեկտեմբերի 12-ի
N 15-Ն հրամանի**

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Ձ Ե Վ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Անվանումը՝ _____

_____
(լրացվում է հարկ վճարողի լրիվ անվանումը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման տվյալներով իրավաբանական անձի լրիվ անվանումը (առևտրային կազմակերպությունների դեպքում՝ ֆիրմային անվանումն ու կազմակերպական-իրավական ձևը), անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով).

ՀՎՀՀ՝

(լրացվում է կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը).

Հասցեն՝ _____

(լրացվում է գործունեության իրականացման, գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման, օպերատիվ ֆինանսական ղեկավարման վայրի հասցեն).

Գործունեության

տեսակը (տեսակները)՝ _____

_____

(լրացվում է տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները)):